

**ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ**

**Արսեն ՍԱՐԳՍՅԱՆ**  
ՀՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. տեղական ինքնակառավարում, համայնք, բնութագրիչ,  
լիազորություն

1991թ. անկախության հռչակումից հետո, Հայաստանն սկսեց իրականացնել մի շարք բարեփոխումներ, ուղղված ժողովրդավարական կառավարման համակարգի ձևավորմանը և անցմանը շուկայական տնտեսության: Ինչպես և մյուս հետխորհրդային պետություններում, այդ գործընթացը միշտ չէ, որ անցնում էր հարթ ու սահուն: Ի լրումն ընդհանուր խնդիրների, Հայաստանի համար իրավիճակը ծանրանում էր այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ Ղարաբաղյան հակամարտությունը, շրջափակումը և ամբողջական էներգետիկ ճգնաժամը: Փաստորեն, հենց այս հանգամանքներով է պայմանավորված բարեփոխումների ուշացումը շուրջ չորս տարով և Սահմանադրության ընդունումը ընդամենը 1995թ.: Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրությունը ենթադրում էր տեղական ինքնակառավարման համակարգի ներդրում, նրա հետագա իրավական կարգավորմամբ, որը և տեղի ունեցավ հետագա տարիներին: 1996-1999թթ.ստեղծվեց ամբողջական օրենսդրական հիմք, ներկայիս տեղական ինքնակառավարման ձևավորման համար: Նշված օրենսդրությունը բազմիցս լրամշակվել և փոփոխվել է՝ համապատասխանեցվելով պետության ապակենտրոնացման ընդհանուր քաղաքականությանը: Սակայն ձևավորման փուլում դրված օրենսդրական շրջանակները զգալիորեն սահմանափակում էին առավել խորացված բարեփոխումների իրականացմանը՝ մնալով այդպիսին առ այսօր: Վարչատարածքային բաժանման գործող համակարգը ձևավորելիս ստեղծվեցին բավականին մեծ թվով համայնքներ, որոնց միջև առկա են էական տարբերություններ: Դրանք վերաբերում են համայնքներին պատկանող տարածքներին, բնակչության թվաքանակին, ֆինանսական հնարավորություններին, համայնքների կարգավիճակին և այլն: Միաժամանակ օրենսդրությունը, անկախ այս գործոններից, բոլոր համայնքներին օժտել է նույն լիազորություններով: Միջին և մեծ համայնքների համար դրանք քիչ են, իսկ բազմաթիվ փոքր և թույլ համայնքներ չեն կարողանում բնակչությանը անհրաժեշտ ծառայություններ մատուցել՝ համապատասխան համայնքային կառույցներ չունենալու կամ ունենալու դեպքում շահագործել չկարողանալու պատճառով, ինչպես նաև անբավարար ֆինանսական միջոցներով պայմանավորված: Մեր հանրապետության 793 համայնքներից՝ շուրջ 400-ը կամ 51%-ը ունեն 1.000-ից պակաս բնակչություն: Հանրապետության գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնք-

ներից 197-ը կամ ընդհանուրի 22.7%-ը ունեն մինչև 300 բնակիչ, 75-ը կամ ընդհանուրի 8.6%-ը՝ 301-500 բնակիչ, 168-ը կամ 19.3%-ը՝ 501- 1000 բնակիչ: Ըստ բնակչության թվի՝ ամենամեծ գյուղական բնակավայր ընդգրկող համայնքը Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքն է (9745 բնակիչ), ամենափոքրը՝ Սյունիքի մարզի Քաշունին (27): Փաստորեն, ամենամեծ գյուղական գյուղական բնակավայր ընդգրկող համայնքը, ամենափոքրից բնակչության թվով մեծ է 360 անգամ: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր համայնքների համար, անկախ նրանց չափերից գործում է միևնույն օրենսդրական համակարգը, վերապահելով նրանց լիազորությունների միևնույն շրջանակ: Այսպես՝ Գյուլիստանի քաղաքի, իր գրեթե հարյուր հիսուն հազարանոց բնակչությանը և քսանյոթ բնակիչ ունեցող Քաշունիի տեղական ինքնակառավարման մարմինները ունեն նույն լիազորություններն ու պարտականությունները: Խնդիրներ կան նաև բյուջեների հավաքագրման տեսանկյունից: Բազմաթիվ գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներում (հատկապես՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում) եկամուտների հավաքագրման մակարդակը չի գերազանցում 50 %-ը: Բոլոր մարզերում առկա են նախորդ տարիներից կուտակված ապառքներ: Ասվածից կարելի է եզրակացնել, որ համայնքների առանց այդ էլ սուղ ֆինանսական միջոցները, չունենալով հավաքագրման բավարար մակարդակ, չեն կարող հնարավորություն ընձեռնել տեղական ինքնակառավարման մարմիններին իրականացնելու նույնիսկ պարտադիր լիազորությունները<sup>1</sup>:

Տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության հիմքերն արտահայտում են տեղական ինքնակառավարման մակարդակով հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները և յուրօրինակությունները: Ինչպես և յուրաքանչյուր հանրային կառավարման համակարգ, այնպես էլ տեղական ինքնակառավարումն, ունի իրեն բնորոշ հիմնական որոշիչ առանձնահատկությունները, առանց որոնց համակարգի կենսագործումն ու զարգացումը հնարավոր չէ պատկերացնել: Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգը բնութագրելիս նկատի են առնվում հետևյալ հիմնական բնութագրիչները.

- ՏԻՄ-երի իրավական կարգավիճակը,
- ՏԻՄ-երի գործունեության իրավական հիմքերը,
- ՏԻՄ-երի լիազորությունները և դրանց քանակական ցուցանիշը,
- Լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը,
- ՏԻՄ կազմակերպական և ֆինանսատնտեսական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքները,

<sup>1</sup> «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգ, Երևան 2011թ.

- ՏԻՄ պաշտպանության դատական և այլ իրավական ձևերը,
- Համայնքի սեփականությունը և դրա կառավարումը,
- Համայնքի բյուջեն և ռազմավարական զարգացման ծրագրերը,
- ՏԻՄ-երի ընտրական համակարգը,
- Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- Միջհամայնքային համագործակցությունը,
- ՏԻՄ-եր - պետություն փոխհարաբերությունները:

Անդրադառնալով ՏԻՄ-երի **իրավական կարգավիճակին**, կարող ենք արձանագրել, որ դրանց իրավական կարգավիճակը անմիջականորեն բխում է համայնքի վերաբերյալ՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված բնորոշումից<sup>2</sup>: Անխոս, համայնքը Սահմանադրության ուժով համարվում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, որի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների իրացումը դրվում է համայնքի ՏԻՄ-երի վրա: ՏԻՄ-երի կարգավիճակի վերաբերյալ առավել հստակ բնորոշումը տրված է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, այն է. Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմինն է, իսկ համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է<sup>3</sup>:

**ՏԻՄ իրավական հիմքերը** կարելի է համարել ՀՀ Սահմանադրությունում և ՀՀ օրենքներում պարունակվող իրավական այն նորմերի ամբողջությունը, որն ամրագրում է տեղական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված իրավական, ֆինանսատնտեսական և կազմակերպ-կառավարչական գործունեության, համայնքների ՏԻՄ-երի առավել սկզբունքային, կարևոր, ընդհանուր գործառույթները:

**ՏԻՄ-երի լիազորությունների, դրանց քանակի և համապատասխան ֆինանսական կարողությունների հարաբերակցությունը** Հայաստանում խիստ հակասական է, այն իմաստով, որ համայնքների ունեցած ֆինանսական հնարավորությունները շատ հաճախ, երբեմն էլ բացառապես չեն համապատասխանում օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները իրականացնելու համար: Այս իմաստով, կարծում ենք, որ համակարգային լուծումների անհրաժեշտության կարիք կա: Այսպես՝ ՏԻՄ-երի լիազորությունների ամրագրումն այդ մարմինների գործունեության ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կարևոր եղանակներից է: Տեղական նշանակության հարցերի լուծման ուղղությամբ ՏԻՄ-երի ինքնուրույն և պատասխանատու գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է իրավական նորմերում ամրագրվող ՏԻՄ-երի լիազորություններից: ՏԻՄ-երի լիազորությունները թույլ են տալիս որոշել

<sup>2</sup> ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով) 180-րդ հոդված:

<sup>3</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված:

նրանց գործունեության պատասխանատվության, հաշվետվողականության, վերահսկելիության շրջանակները, ինչպես նաև վերլուծել ՏԻՄ-երի գործառույթների համապատասխանությունը օրենքի և իրավունքի նորմերին: ՏԻՄ-երի լիազորությունները պայմաններ են ստեղծում համայնքի տարածքում իշխանության կազմակերպման միասնական համակարգ ձևավորելու համար: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ, իշխանությունը պատկանում է ժողովրդին<sup>4</sup>. ՀՀ-ում իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, իսկ տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձև է, նշանակում է, որ նախ՝ գերիշխան է ժողովուրդը, այլ ոչ թե իշխանության ինստիտուտները, այդ թվում նաև ՏԻՄ-երը, որոնք օժտված են սոսկ համայնքի բնակչության կողմից իրենց փոխանցված լիազորություններով, երկրորդ՝ ՏԻՄ-երի լիազորություններն ածանցյալ են պետության կողմից ճանաչվող և երաշխավորվող համայնքային խնդիրներից: Լիազորությունների սահմանման միջոցով իրականացվում է հասարակական հարաբերությունների պետաիրավական կարգավորումը և, հետևաբար, պետական մարմնի կամ ՏԻՄ-երի ինքնագոյատևումն անհնար է պատկերացնել առանց իշխանության լիազորություններով նրանց օժտելու:

Այսպիսով, ՏԻՄ-երի լիազորությունները կարելի է սահմանել որպես այդ մարմինների՝ համայնքային նշանակության հարցերի լուծման համար անհրաժեշտ և ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան ամրագրված իրավունքների և պարտականությունների ամբողջություն:

**Լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը** ժողովրդավարական զարգացած երկրների ամենակարևոր և հատկանշական բնութագրիչներից է: Այս համատեքստում անհրաժեշտ է համաչափորեն լուծել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրները՝ վարչական և ֆինակալ ապակենտրոնացումը, ՏԻՄ-երի հզորացումն ու տեղական ժողովրդավարության զարգացումը՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով: Հայաստանում տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումների նպատակները և խնդիրները տարանջատված են ըստ ակնկալվող արդյունքների՝ վերջնական (ազդեցության), միջանկյալ և գործոնային: Ընդ որում, յուրաքանչյուր մակարդակում ակնկալվող արդյունքներին ներկայացվող հիմնական պահանջներն են. դրանց շոշափելիությունը, իրատեսականությունը, չափելիությունը և համադրելիությունը: Հիմնական նպատակը և ակնկալվող

---

<sup>4</sup> ՀՀ Սահմանադրություն, 2-րդ հոդված:

արդյունքը Հայաստանում ՏԻՄ արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումն է:

Տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը հնարավոր է կազմավորել միայն համապատասխան **կազմակերպական և ֆինանսատնտեսական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքների** առկայության պայմաններում: Տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունն ապահովող կարևոր ընդհանուր երաշխիք է տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ֆինանսատնտեսական բազան: Որպես համայնքի անբաժանելի հատկանիշներ՝ ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքն ամրագրում է համայնքի սեփականությունը և համայնքի բյուջեն: ՏԻՄ-երն ինքնուրույն կառավարում են համայնքի սեփականությունը, որը սեփականության այլ ձևերի հետ համատեղ ճանաչվում և հավասարապես պաշտպանվում է պետության կողմից: Այս իմաստով, ՏԻՄ-երն իրավասու են կատարել համայնքի սեփականության հետ կապված՝ օրենքով թույլատրված ցանկացած գործարք: Ընդ որում, համայնքի սեփականության օտարման կարգը և պայմանները համայնքը որոշում է ինքնուրույն: ՏԻՄ-երն իրավասու են, օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրականացման նպատակով, ստեղծել ձեռնարկություններ կամ մասնակից դառնալ դրանց ստեղծմանը: Տեղական ինքնակառավարման ֆինանսական ինքնուրույնությունը երաշխավորվում է համայնքի բյուջեն ինքնուրույն ձևավորելու և կատարելու՝ ՏԻՄ-երին վերապահված Սահմանադրական իրավունքով:

**Տեղական ինքնակառավարման պաշտպանությունը** իրականացվում է դատական և այլ իրավական ձևերի միջոցով: ՀՀ Սահմանադրությունը, օրենսդրական և իրավական մյուս ակտերը, երաշխավորելով տեղական ինքնակառավարումը, սահմանում են ինչպես տեղական ինքնակառավարման խախտված իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ նման խախտումների կանխարգելմանը նպատակաուղղված իրավական միջոցների համակարգ: Տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանությունն ապահովող երաշխիքների համակարգում առանձնահատուկ դեր է կատարում տեղական ինքնակառավարման դատական պաշտպանության Սահմանադրական իրավունքը: Իրավական պետությունում դատարանը հանդես է գալիս անկախ, խախտված իրավունքի վերաբերյալ վեճերը լուծող մարմնի դերում: ՀՀ դատական իշխանությունը կոչված է՝ նպաստելու պետությունում օրինականության ապահովմանը, իրավակարգի ամրապնդմանը, Սահմանադրական կարգի պաշտպանությանը, որի տարրեից մեկն էլ պետության կողմից ճանաչվող ու երաշխավորվող տեղական ինքնակառավարումն է:

**Համայնքի սեփականությունը և դրա կառավարումը** տեղական ինքնակառավարման համակարգի ամենակարևոր տարրերից ու բնութագրիչներից է: Համայնքի սեփականությունը կազմված է համայնքապատկան գույքից, այդ թվում անշարժ և շարժական, դրամական միջոցներից, ինչպես նաև գույքային և ոչ գույքային իրավունքներից: Սեփականության նշված տարրերի հարաբերակցությունը բնութագրում է սեփականության կառուցվածքը: Համայնքի բյուջեի միջոցները նույնպես համայնքի սեփականությունն է: Համայնքի սեփականություն համարվող գույքը կարող է դասակարգվել ըստ դրա նշանակության՝

- սոցիալական բնույթի,
- գործառնական նշանակության,
- կառավարչական գործառույթների համար:

Համայնքի սեփականությունը համայնքի ղեկավարի կողմից ենթարկվում է ամենամյա պարտադիր գույքագրման, որի արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանու հաստատմանը: Ըստ էության, իրականացվում է համայնքի սեփականության հաշվառում: Համայնքի սեփականության հաշվառումը համայնքային սեփականության մասին տեղեկությունների հավաքագրումը, գրանցումը և ընդհանրացումն է<sup>5</sup>: Համայնքի սեփականության հաշվառումը և համապատասխան գրանցամատյանի վարումը իրականացվում է համայնքի սեփականության վերաբերյալ լիարժեք ու հավաստի տեղեկություններ ունենալու նպատակով, որոնք անհրաժեշտ են սեփականության կառավարման համար:

**Համայնքի բյուջեն և ռազմավարական զարգացման ծրագրերը** տեղական ինքնակառավարման համակարգի այն կարևոր բնութագրիչներից են, առանց որոնց հնարավոր չէ ուղղակի դիտարկել համակարգի զարգացումը՝ իր սուբյեկտների մասով:

ՀՀ բյուջետային համակարգի անբաժանելի և բաղկացուցիչ մաս է համարվում համայնքների բյուջեները: Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և ՏԻՄ-երի՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը<sup>6</sup>: Համայնքի բյուջեն հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ համայնքի ավագանու կողմից: Բյուջեում փոփոխություններ կատարելու նախաձեռնության իրավունք ունի համայնքի ղեկավարը, այդ փոփոխությունները կատարվում են ավագանու կողմից (ավագանու հաստատմամբ):

<sup>5</sup> «Տեղական ինքնակառավարման հիմունքներ» Հ.Օրդյան, Երևան 2000թ.

<sup>6</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մաս:

Համայնքների բյուջեների կառուցվածքը, ՏԻՄ-երի կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի<sup>7</sup>

- համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե).

- համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

**ՏԻՄ-երի ընտրական համակարգը** տեղական ինքնակառավարման համակարգի հիմնարար անկյունաքարերից է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել համակարգի ձևավորումն ու կազմակերպումը: ՏԻՄ-երի ընտրակարգի հետ կապված ամենագլխավոր իրավակարգավորումը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, համաձայն որի ՏԻՄ-երը ընտրվում են 5 (հինգ) տարի ժամկետով<sup>8</sup>: Համայնքի ղեկավարի մասով առկա է Սահմանադրական կարգավորում, որով համայնքի ղեկավարը կարող է ընտրվել ուղղակի կամ անուղղակի ընտրակարգով: Այս և առհասարակակ ՏԻՄ-երի ընտրությունների կարգի հետ կապված բոլոր իրավահարաբերությունները սահմանվում են ՀՀ ընտրական օրենսգրքով: Ավագանու ընտրության հետ կապված՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված են միմիայն ուղղակի ընտրակարգի վերաբերյալ կարգավորումները, համայնքի ղեկավարի մասով ևս ուղղակի ընտրակարգ է սահմանված՝ բացառությամբ, Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների<sup>9</sup>: Այս երեք համայնքներում գործում է համամասնական ընտրակարգ, այսինքն՝ համայնքի ընտրազանգված համարվող բնակիչները ընտրում են համայնքի ավագանուն, իսկ ավագանին իր կազմից համապատասխանաբար համայնքի ղեկավարին: Այս ընտրական ինստիտուտը ՀՀ-ում թերևս նոր է ներդրվել, առաջին փորձը եղել է Երևան քաղաքում, իսկ 2016 թվականին արդեն այն կիրառվեց նոր ընտրական օրենսգրքին համապատասխան՝ Գյումրի և Վանաձոր համայնքներում: Այս ընտրակարգի անցման ամենակարևոր արդյունքը կարելի է համարել ավագանու ինստիտուտի կարևորության բարձրացումը և դերի մեծացումն ու ուժեղացումը: Անխոս, ժամանակակից ժողովրդավարական հասարակություն ձևավորելու համար գտնում ենք, որ համայնքի ղեկավարի ուղղակի ընտրակարգը թերևս ամենաճիշտ եղանակն է, սակայն խոշոր համայնքների պարագայում կարելի է դիտարկել նաև անուղղակի ընտրակարգի կիրառումը:

**Մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը՝** համակարգի ժողովրդավարական հիմնասյուններից է: Անշուշտ, առանց բնակչության մասնակցության ապահովման, չի կարելի համարել տեղական ինքնակառա-

<sup>7</sup> «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված:

<sup>8</sup> ՀՀ Սահմանադրություն 181-րդ հոդված:

<sup>9</sup> ՀՀ ընտրական օրենսգրք, 6-րդ բաժին:

վարման իրավունքը լիարժեք իրացված, քանի որ տեղական ինքնակառավարումը համայնքի սուբյեկտի (բնակչի) մասնակցությամբ իրականացվող իրավունք է:

Վերջին տասնամյակի ընթացքում ավելի ու ավելի մեծ նշանակություն է տրվում քաղաքացիների մասնակցությանը համայնքի կյանքում և ՏԻՄ-երի կողմից որոշումների կայացման գործընթացում: Ավելի մեծ թվով քաղաքացիներ են սկսել գիտակցել իրենց կյանքի վրա անմիջական ազդեցություն ունեցող որոշումներին միջամտելու իրենց իրավունքը: Համայնքի լայն շրջանակների տեսակետների հաշվառմամբ, մասնակցային գործընթաց կիրառելով, բարձրանում է ՏԻՄ-երի կայացրած որոշումների լեգիտիմությունն ու որակը, ավելանում է վստահությունը տեղական իշխանության նկատմամբ: Լինելով ժամանակակից ժողովրդավարության կարևորագույն բաղադրիչ, քաղաքացիների մասնակցությունը նպաստում է մարդկային ու սոցիալական կապիտալի զարգացմանը, հետևաբար նաև՝ համայնքի հզորացմանը:

**Միջհամայնքային համագործակցությունը** համայնքների տնտեսական և սոցիալական ներուժի ուժեղացմանը միտված, հանրային ծառայությունները համատեղ մատուցելու և դրանով իսկ առավել բարձր որակի ծառայություններ տրամադրելու, և, միևնույն ժամանակ, համայնքի ֆինանսները տնտեսելու հետաքրքիր գրավականներից մեկն է: Միջհամայնքային համագործակցությունը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով, այն կարող է հանդես գալ միջհամայնքային միավորումների ձևավորմամբ, համատեղ ծառայությունների մատուցմամբ, համատեղ ձեռնարկությունների կամ կազմակերպությունների ստեղծմամբ, համատեղ գործունեության կազմակերպման (կոնսորցիումի) միջոցով և այլն:

Հայաստանում միջհամայնքային համագործակցությունը զարգացած չէ, որը պայմանավորված է ինչպես անկատար օրենսդրությամբ, այնպես էլ համայնքների թույլ կարողություններով:

Հայաստանի Հանրապետությունում միջհամայնքային համագործակցության ձևաչափերի վերաբերյալ օրենսդրական հիմքեր չկան, բացառությամբ միջհամայնքային միավորումների ձևաչափի: Միջհամայնքային միավորումների ստեղծման մասին իրավակարգավորումը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ<sup>10</sup>, ինչպես նաև դրանից բխող, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով<sup>11</sup>:

---

<sup>10</sup> ՀՀ Սահմանադրություն, 189-րդ հոդված:

<sup>11</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 9-րդ գլուխ:



**ՏԻՄ-եր - պետություն փոխհարաբերությունները** եղել և մնում են տեղական ինքնակառավարման համակարգի ամենակարևոր նախադրյալներից մեկը: ՏԻՄ-երի գործունեության շրջանակը, նրանց բազմաթիվ ու բազմաբնույթ լիազորությունները, պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում ունեցած դերն ու նշանակությունը, կանխորոշում են ամենատարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ՝ այդ թվում պետական իշխանության մարմինների հետ, ՏԻՄ-երի փոխհարաբերությունների համակարգի կառուցվածքը: ՏԻՄ-եր -պետություն փոխհարաբերության համակարգը բավական բարդ է, ինչը կապված է փոխհարաբերությունների սուբյեկտների քանակի, դրանց միջև կապերի խաչաձևման ու զուգորդման, փոխհարաբերությունների մակարդակների որակական տարբերությունների և մի շարք այլ գործոնների հետ: Հայաստանում ՏԻՄ-եր - պետություն փոխհարաբերությունները կարելի է բաժանել երկու մակարդակների՝ տարածաշրջանային և պետական: Փոխհարաբերությունների այս մակարդակները միմյանցից տարբերվում են ոչ միայն դրանց համապատասխան լիազորություններով, այլև ՏԻՄ-երի խնդիրների շրջանակով, գործառույթների բնույթով, իրավական հիմքերով, համայնքների ինքնուրույնության աստիճանով և այլ չափանիշներով:

Տարածաշրջանային մակարդակը հիմնականում ներառում է մարզպետարանների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների և ծառայությունների հետ փոխհարաբերությունների ենթահամակարգը: Փոխհարաբերությունների մյուս՝ ավելի բարձր մակարդակն ընդգրկում է պետական (հանրապետական) մարմինների հետ հարաբերությունների ենթահամակարգը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում շարունակաբար պլանավորվող և ընթացքում գտնվող բարեփոխումները, անշուշտ, կարող ենք փաստել, որ տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում վաղուց ձևավորվել է, և չնայած բազմաթիվ խոչընդոտների և խնդիրների, պետության կայուն զարգացող համակարգերից է: Կարծում ենք, որ իրավական պետության սկզբունքներին համապատասխան, իրավական գործուն կանոնակարգման պարագայում՝ տեղական ինքնակառավարում իրականացնելիս առաջացած բոլոր իրավահարաբերությունները իրենց հնարավոր կարգավորումները կստանան, դրանով ևս մեկ անգամ զարկ տալով ժողովրդավարության ամենակարևոր տարրերից մեկի՝ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը:

**Արսեն ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության հիմնական բնութագրիչները**

*Բանալի բառեր. տեղական ինքնակառավարում, համայնք, բնութագրիչ, լիազորություն*

Տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության հիմքերն արտահայտում են տեղական ինքնակառավարման մակարդակով հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները և յուրօրինակությունները: Ինչպես և յուրաքանչյուր հանրային կառավարման համակարգ, այնպես էլ տեղական ինքնակառավարումն, ունի իրեն բնորոշ հիմնական որոշիչ առանձնահատկությունները, առանց որոնց համակարգի կենսագործումն ու զարգացումը հնարավոր չէ պատկերացնել:

**Арсен САРГСЯН**

**Основные характеризующие черты эффективности системы местного самоуправления Республики Армения**

*Ключевые слова. Местное самоуправление, общество, характеристики, авторизация*

Основания деятельности системы местного самоуправления отражают особенность и специфику общественных отношений на муниципальном уровне. Как и в любой системе государственного управления и местное самоуправление имеет свои основные характеризующие черты, без которых невозможно представить себе реализацию и развитие системы.

**Arsen SARGSYAN**

**The efficiency analysis of the local self-government system of RA**

*Key words: local self-government, community, characteristic, authority*

The grounds express the characteristics of the regulation of public relations at the local self-government level. As with each public management system, local self-governance, has its main features, without which the system's viability and development cannot be imagined. During the two and a half decades of independence the system of self-government has been significantly improved. However, one of the most vital issues remain the ability to collect revenues from local communities and gain financial independence from the central government.